

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Ռուբիկ Հարությունյանի անվան Արուվյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

1. Ընտանեկան բուժքույր-2.0
2. Մանկական նյարդաբանի բուժքույր – 1.0
3. Թերապևտիկ բաժանմունքի միջամտությունների կաբինետի բուժքույր – 0.75
4. Շտապ օգնության հերթապահ բուժքույր /մեկնող բրիգադա/ - 1.0
5. Ինֆեկցիոն բաժանմունքի հերթապահ բուժքույր բուժքույր - 1.0
6. Ախտորոշիչ բաժանմունքի կլինիկական լաբորատորիայի լաբորանտ - 2.0
7. Ախտորոշիչ բաժանմունքի սերոլոգիայի լաբորատորիայի լաբորանտ - 1.0
8. Վիրաբուժական բաժանմունքի վիրահատարանի հերթապահ բուժքույր -1.0

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կրավարարի ստորև նշված պահանջներին՝

1. Միջին բուժանձնակազմի համար միջին մասնագիտական կրթության առկայություն՝ համապատասխան մասնագիտությամբ,
2. Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում /լրացվում է տեղում/,
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,

- 6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- 7) նախորդ աշխատավայրից բնութագիր /եթե այդպիսին առկա է/,
- 8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Ռուբիկ Հարությունյանի անվան Արուսյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում / ՀՀ Կոտայքի մարզ, ք.Արուսյան, Հատիսի փողոց 6 /, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 13.09.2019թ. ժամը 12⁰⁰:

Մրցույթը տեղի կունենա 18.09.2019 թվականին «Ռուբիկ Հարությունյանի անվան Արուսյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, ժամը 12⁰⁰-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<Ռուբիկ Հարությունյանի անվան Արուսյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի աշխատանքային խմբին, կամ գանգահարել 022 22 33 59 հեռախոսահամարով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: